

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) Երիտասարդ գիտաշխատողների և մասնագետների խորհուրդը՝ ԵԳՄԽ, (այսուհետ՝ Խորհուրդ) համալսարանական ինքնակառավարվող և հասարակական հիմունքներով գործող ստորաբաժանում է:

2. Սույն կանոնակարգով սահմանվում են Խորհրդի նպատակները, խնդիրները, իրավասությունները, կառուցվածքը, գործունեության ընթացակարգը և կառավարումը:

II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Խորհրդի նպատակներն են՝

3.1 աջակցել ուսանողների, երիտասարդ գիտաշխատողների և հետազոտողների գիտահետազոտական աշխատանքների իրականացման և ներդրման գործընթացին,

3.2 ստեղծագործական ներուժի լիարժեք իրականացման համար համախմբել երիտասարդ գիտաշխատողների, դասախոսների, հետազոտողների, դոկտորանտների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների գիտահետազոտական գործունեության ուժերը,

3.3 երիտասարդ գիտաշխատողների և մասնագետների համար ստեղծել բարենպաստ միջավայր,

3.4 երիտասարդների շրջանում քարոզել գիտական արժեքները,

3.5 կազմակերպել գիտահետազոտական փորձի փոխանակման միջոցառումներ,

3.6 ապահովել միջազգային գիտական կազմակերպությունների, երիտասարդական կառույցների հետ համագործակցություն և անդամակցություն:

III. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Խորհուրդն իրավասու է՝

4.1 համակարգել Համալսարանի ստեղծագործական ներուժը,

4.2 աջակցել երիտասարդ գիտաշխատողների, դասախոսների, հետազոտողների, դոկտորանտների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը,

4.3 համախմբել երիտասարդ գիտաշխատողներին և մասնագետներին,

4.4 հավաքագրել և տարածել միջազգային և տեղական ծրագրերի մասին տեղեկատվություն,

4.5 Խորհրդի ծրագրերի իրականացման միջոցով կազմակերպել Համալսարանի գիտական գործունեությանն՝ ակտիվ մասնակցություն,

4.6 կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ և այլ միջոցառումներ,

4.7 խրախուսել Համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության դիմորդներին, գիտաժողովների մասնակցության հայտատուներին, գիտակրթական ծրագրերին և այլ միջոցառումներին մասնակցության համար,

4.8 մշակել և իրագործել Խորհրդի աշխատանքային և տարեկան ծրագրերը,

4.9 լուսաբանել Խորհրդի կատարած աշխատանքները,

4.10 ստեղծել և շահագործել գիտատեղեկատվական ցանց,

4.11 իրականացնել մասնագիտական ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների՝ պրակտիկայում կիրառման խորհրդատվություն,

4.12 ստեղծել փորձարարական և տեսական համատեղ հետազոտությունների իրականացման համար տարբեր ամբիոնների երիտասարդ գիտաշխատողներից, հետազոտողներից բաղկացած խմբեր, իրականացնել աշխատանքների պլանավորում և կազմակերպում,

4.13 լավագույն աշխատանքները ներկայացնել խրախուսման,

4.14 աջակցել մրցանակների և հատուկ կրթաթոշակների տրամադրման գործում:

5. Խորհուրդն իրավունք ունի կազմակերպել կոնֆերանսներ, դասախոսություններ, սեմինարներ, ամառային դպրոցներ, բանավեճային ակումբներ, լավագույն ավարտական աշխատանքների և թեզերի քննարկումներ, այլ միջոցառումներ:

6. Խորհուրդն իր աշխատանքներում կարող է համագործակցել Համալսարանի պրոռեկտորների, ֆակուլտետների ղեկանների, ամբիոնի վարիչների և Համալսարանի այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ:

7. Խորհրդի կազմում գործում է Ուսանողական Գիտական Ընկերությունը (այսուհետ՝ ՈւԳԸ): ՈւԳԸ-ն գործունեությունը համակարգվում է Խորհրդի և Համալսարանի Ուսանողական խորհրդի կողմից:

8. ՈւԳԸ-ը կազմված է նախագահից և անդամներից, որոնք անդամագրվում են ՈւԳԸ-ն նախագահին ուղղված դիմումով:

9. ՈւԳԸ-ն նախագահը ընտրվում է անդամների կազմից, բաց քվեարկությամբ 2 տարի ժամկետով:

IV. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Խորհուրդը կազմված է՝

10.1 անդամներից, որոնք անդամագրվում են Խորհրդի նախագահին ուղղված դիմումով, իսկ ուսանող անդամները ՈւԳԸ-ն նախագահին ուղղված դիմումով,

10.2 Խորհրդի ընդհանուր գործունեությունը իրականացնող նախագահությունից, որի կազմը և թվաքանակը ընտրվում է Խորհրդի կողմից՝ 2 տարի ժամկետով, նախագահության կազմից կարող են ընտրվել հանձնաժողովների, հանձնախմբերի և այլ կառույցների ղեկավարներ ու անդամներ,

10.3 նախագահից, ով ընտրվում է նախագահության կազմից, փակ, գաղտնի քվեարկությամբ, նախագահության ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, 2 տարի ժամկետով,

10.4 2 փոխնախագահից: Խորհրդի փոխնախագահներից մեկը ՈւԳԸ նախագահն է, իսկ մյուսը՝ առաջադրվում է նախագահի կողմից՝ նախագահության կազմից, և

ընտրվում է նախագահության ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ՝ 2 տարի ժամկետով,

10.5 քարտուղարից, ով առաջադրվում է նախագահի կողմից՝ նախագահության կազմից, և ընտրվում է նախագահության ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ՝ 2 տարի ժամկետով:

11. Խորհրդի նախագահը հաշվետու է Համալսարանի Գիտական խորհրդին և Խորհրդին:

12. Խորհրդի նախագահը՝

12.1 Խորհրդին ներկայացնում է տարեկան հաշվետվություն,

12.2 նախագահության անդամների հետ մշակում է Խորհրդի գործունեության տարեկան պլանը, ապահովում է նպատակների, խնդիրների և որոշումների իրագործումը, հետևում՝ հանձնարարությունների իրականացմանը, ներկայացնում է Խորհրդի շահերը և պատասխանատվություն կրում աշխատանքների արդյունավետության համար,

12.3 Խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումների անհրաժեշտությունից ելնելով, կարող է ստեղծել աշխատանքային խմբեր, որոնք պատասխանատու կլինեն նախատեսվող միջոցառումների կազմակերպման համար:

13. Նախագահի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Համալսարանի Գիտական խորհրդի կամ Խորհրդի կողմից:

Նախագահը կարող է հրաժարվել զբաղեցրած պաշտոնից՝ իր դիմումի համաձայն:

14. Փոխնախագահները՝

14.1 ապահովում և կազմակերպում են Խորհրդի նախագահի ու նախագահության որոշումների և հանձնարարականների կատարումը, նախագահի հանձնարարությամբ համակարգում են Խորհրդի աշխատանքները,

14.2 նախագահի բացակայության դեպքում նրա կողմից առաջադրված և նախագահության կողմից հաստատված փոխնախագահը կատարում է նախագահի պարտականությունները:

15. Քարտուղարը իրականացնում է Խորհրդի կազմակերպչական աշխատանքները և ապահովում է խորհրդի փաստաթղթաշրջանառությունը:

16. Խորհրդի նախագահության անդամները՝

16.1 ընդունում են Խորհրդի կանոնակարգը, որը ենթակա է վավերացման Համալսարանի Գիտական խորհրդի կողմից,

16.2 օժանդակում են Խորհրդի նպատակների և խնդիրների իրականացմանը,

16.3 մշակում և ընդունում են Խորհրդի ծրագրերը ու ապահովում են դրանց իրականացումը:

17. Խորհրդի անդամները՝

17.1 Խորհրդի անդամ կարող են դառնալ մինչև 35 տարեկան՝ Համալսարանի այն աշխատակիցները, ուսանողները, երիտասարդ գիտաշխատողները, հետազոտողները, ովքեր ընդունում են Խորհրդի կանոնակարգը և նպաստում են Խորհրդի նպատակների և խնդիրների իրականացմանը,

17.2 Խորհրդի անդամը կարող է դուրս գալ սեփական դիմումի համաձայն, որի վերաբերյալ որոշում չի կայացվում:

18. Խորհրդի անդամը իրավունք ունի՝

18.1 ստանալ տեղեկատվություն Խորհրդի գործունեության մասին,

18.2 մասնակցել Խորհրդի կազմակերպած միջոցառումներին,

18.3 արտահայտել իր տեսակետը և հանդես գալ առաջարկներով,

18.4 ընտրել և ընտրվել Խորհրդի մարմիններում:

19. Խորհրդի անդամը պարտավոր է՝

19.1 մասնակցել և օժանդակել Խորհրդի նպատակների և խնդիրների լուծմանը,

19.2 իրականացնել Խորհրդի շրջանակներում ստանձնած պարտականությունները,

19.3 Խորհրդի շրջանակներում կատարել Խորհրդի կանոնակարգի պահանջները:

20. Խորհրդի նիստերը՝

20.1 Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Նիստի օրակարգի մասին Խորհրդի անդամները նախապես տեղեկացվում են քարտուղարի միջոցով: Խորհրդի նիստերը իրավագոր են և որոշումներ կարող են ընդունել՝ անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Քննարկվող հարցերը դրվում են քվեարկության և որոշումներ են ընդունվում բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ,

20.2 Խորհրդի նախագահության նիստը տեղի է ունենում առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Խորհրդի նախագահը ներկայացնում է օրակարգը և ընթացիկ աշխատանքների մասին տեղեկատվություն: Նախագահությունը կարող է որոշումներ ընդունել անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Քննարկվող հարցերը դրվում են բաց քվեարկության և որոշումներ են ընդունվում նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի: Ընդունված որոշումների մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է նախագահի և քարտուղարի կողմից:

V. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

21. Խորհրդի գործունեությունը ապահովվում է Համալսարանի միջոցներով և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

22. Յուրաքանչյուր միջոցառման նախահաշիվ /հաշվետվություն/ Խորհրդի նախագահի կողմից կազմվում և ներկայացվում է Համալսարանի Գիտական խորհուրդ, հաստատվում և վավերացվում սահմանված կարգով:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

23. Խորհուրդն ունի իր անվանմամբ և խորհրդանշով ձևաթուղթ:

24. Խորհրդի խորհրդանիշն է հետևյալ նշանը՝



25. Խորհուրդն ստեղծվում և լուծարվում է ինքնառաջադրմամբ՝ անդամների կողմից հիմնադիր նիստում, հաստատվում է Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ, գործում է Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգին համապատասխան:

26. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ:

27. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ հաստատվելուց հետո՝ հաջորդ օրը: